281.6
Ч-21

1908р.

Правила церковной церемоніи при выборах Католикоса всего армянства

ԿԱՆՈՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏԱՄԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի Մ. ՏԱՃԱՐԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Կազմեց
Մայր Տաճարի Լուսարարապետ
ՂԵՒՈՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Վաղարշապատ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
1908

281.6
4-21

4-21

ՀՐԱՄԱՆԱՒ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Բարձ. Սրբազան ԴԻՈՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Աղօթք նախքան զքանալ ժողովոյն ընտրութեան Կաթուղիկոսի, զոր առաջի սեղանոյ Իշման Տեղւոյն ասէ Ատենապետն ժողովոյն։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս ամէն։ Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եայլն։

Ապա Սաղմոս ՁԹ. ասեն երկու Եպիսկոպոսուն։

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր։ և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ։

Տէր ապաւէն եղեր մեր յազգէ մինչև յազգ. մինչչև լերինք հաստատեալ էին, և մինչչև ստեղծեալ էիր զերկիր և զաշխարհն տիեզերս։

Յաւիտենից մինչև յաւիտեանս դու ես։ մի դարձուցաներ զմարդ ի տառապանս։ և ասացեր դարձարուք առիս որդիք մարդկան։

Հազար ամ յաչս Տեառն որպէս օր երեկի՝ զի էանց, որպէս պահ մի գիշերոյ։ և ամք նոցա անարգուիթեամբ եղիցին։

Ընդ առաւօտս որպէս դալարի բուսցին. ընդ առաւօտս որպէս դալարի զուարճասցին և ծաղկեսցին. ընդ երեկոյս թարշամեսցին չորասցին և անկցին։

Նուաղեցաք մեք ի բարկութենէ քումմէ, և ի սրտմտութենէ քումմէ խռովեցաք։

.05. 2013
7883

Եդեր զմեղս մեր առաջի քո. և զկեանս մեր ի լոյս երեսաց քոց։

Ամենայն աւուրք մեր նուազեցան, և ի բարկութենէ քումմէ խռովեցաք։

Ժամանակ ամաց մերոց անդադար որպէս սարդի. և թիւ աւուրց ամաց մերոց ինոսա եօթանասուն ամ։

Ապա թէ առաւել ևս՝ ութսուն ամ. և որ ինչ աւելի է քան զայն, ցաւոք և հեծութեամբ։

Եկն ի վերայ մեր հեծութիւն և խրատեցաք, իսկ արդ՝ ո՞ գիտասցէ զօրութիւն բարկութեան քո. և կամ յահէ քումմէ զսրտմբտութիւն քո համարեսցի։

Այսպէս ցոյց ինձ զաջ քո, և որք խոնարհեն սրտիւք, զիմաստութիւնս քո։

Դարձ Տէր՝ մինչև յե՞րբ. մխիթարեա՛ց ի ծառայս քո։

Լցաք առաւօտու ողորմութեամբ քով. ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն՝ յորս խոնարհ արարեր զմեզ. և ամացն՝ յորս տեսաք զչարչարանս։

Հայեա՛ց Տէր, ի ծառայս քո և ի գործս ձեռաց քոց, և առաջնորդեա՛ որդւոց նոցա.

58382-67
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արմ.ССР

եղիցի լոյս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր։

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա՛ ի մեզ Տէր. և զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ևն։

Մին յԵպիսկոպոսաց ասէ.

Ի մէջտաճարիս, և առաջի Աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս, և սուրբ սեղանոյս՝ խոնարհեալ երկիւղիւ երկիրպագնեմք. զսուրբ և զհրաշալի և զյաղթող զՑարութիւնդ Քո օրհնեմք և փառաւորեմք. և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, Ամէն։

Եւ միւսն ասէ.

Հովիւ քաջ, Հովիւ բարի և յաւիտենական. նայեա՛ց և այց արա՛ բանաւոր հօտի քո, զոր ժողովեցեր առ քեզ գթութեամբ քով։ Զի քո առաջի կամք, Տէր, և առ ի քէն ողորմութեանցդ և գթութեանցդ ակն ունիմք։ Զամենեսեան օրհնեա՛, զամենեսեան իմաստնացո՛ն, զամենեսեան լուսաւորեա՛ և ամենեցուն պարգևեա՛ զերկնից արքայութիւնդ։ Վասն զի Դու ես Տէր կենաց և Աստուած ողորմութեանց, և քեզ վայելէ

փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յն։

Իսկ յետ աւարտման ընտրութեան Կաթուղիկոսի՝ Առենապետն ծանուցանէ ժողովոյն զվերջաւորութենէ գործոյն. և ապա երգեն զՇարականն.

ԴՁ.

«Թագաւոր փառաց Աստուած Հոգիդ կենդանարար՝ ի շնորհաբաշխ յաւուր մեծի ծննդեան Մարիամու դստեր Դաւթի թագաւորի նորոգեա զկենդանութիւն մերոյ թագաւորին. զի օրհնեսցուք զքեզ Տէր այժմ և յաւիտեան։

Աղբիւր կենաց և փրկութեան մերոյ Հոգի Հօր և Որդւոյ՝ ի յարմատոյն Յեսեայ բղխման գաւազանի հասեալ ժամու՝ շնորհազարդ պայծառացո զգաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին. զի օրհնեսցուք զքեզ Տէր, այժմ և յաւիտեան։

Լրումն աշխարհի և ճառագայթ իմանալի Հոգիդ Սուրբ Աստուծոյ՝ ի ցնծութեան աւուր լրման ուրախութեան Յովակիմայ և Աննայի՝ աղօթիւք սոցա լցո զպէտս կարեաց Հայաստանեայց եկեղեցւոյ. զի օրհնեսցուք զքեզ Տէր այժմ և յաւիտեան»։

Եւ ապա Առենապետն ասէ.

Պահպանիչ. Հայրմեր։ Եւ արձակին ի խաղաղութիւն։

ԿԱՆՈՆ

Նաւակատեաց Օծման Կաթուղիկոսի ամենայն Հայոց ի Հայրապետութիւն։

Յերեկոյի շաբաթուն նախքան զժամերգութիւնն՝ ամենայն կարգի և ասաիճանի միաբանութիւնն Մայր Աթոռոյս զգեստաւորեալ շուրջառօք, խաչօք և խաչվառովք, բուրվառօք և կերոնօք և ամենայն եկեղեցական զարդուք ելեալ ի նախադուռն վեհարանի, սպասեն առ վայր մի, մինչև Վեհափառ Հայրապետն իջեալ ի Վեհարանէն՝ կանգնի ի գլուխ հանդիսականաց ի ներքոյ հովանոցին այսու հանդիսիւ։

Ա. Շաթիրք երկուք կարմիր հանդերձիւք, ի ձեռս ունելով զարծաթագլուխ ձեռնափայտս (տաճատ, ասա).

Բ. Խաչակիր դպիրք մի զոյգ.

Գ. Խաչվառակիր դպիրք մի զոյգ.

Դ. Քահանայք, վարդապետք և եպիսկոպոսունք շուրջառօք՝ յերկուս դասս բաժանեալ.

Ե. Երգեցիկ խումբն ժամաշապկօք՝ ընդ մէջ վարդապետաց և եպիսկոպոսաց.

Զ. Բուրվառակիր չորեք՝ երկու վարդապետք և երկու սարկաւագք.

Է. Հայրապետական դրօշակակիր խաչ և գաւազան կրող երկու վարդապետք.

Ը. Հայրապետական ոսկեթել քօղ կրող երկու հասակաւոր դպիրք.

Թ. Հայրապետական հովանին կրող չորս քահանայք.

Ժ. Եւ ի գլուխ ամենեցուն վեհափառ Հայրապետն.

Հայրապետն ասէ.

«Օրհնեա՛լ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ամէն.

Եւ բուրվառակիր սարկաւագն առ ընթեր կացեալ ասէ բարձր ձայնիւ.

«Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկա՛լ, կեցո՛ և ողորմեա՛»։

Հայրապետն ասէ.

«Օրհնութի՛ւն և փա՛ռք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»։

Եւ ապա՝ երգեցիկ խումբն երգէ Դ.Զ. Շարականն,

«Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող, որ յառաջ գիտութեամբ զփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ ի Պարթևական մեղապարտ ազգէն Լուսաւորիչ մեզ շնորհեցեր. վասնորոյ բարեխօսութեամբ սորա Փրկիչ կեցո՛ զմեզ այժմ և ի Քո յահաւոր գալստեան»։

Եւ զայս Շարականն ասելով թափօրն գնայ յեկեղեցին. և մինչ հասանեն ցաւագ դուռն եկեղեցւոյն՝ երգիչքն երգեն Դ.Զ. Շարականն

«Ուրախ լե՛ր սուրբ եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով, և զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօքն իւրովք»։

Զնարականն երգելով մտանեն ի տաճարն՝ ուր առաջի Իկման տեղւոյն կանգնեալ Հայրապետն՝ ասացէ զՍաղմոսն ՃԻԱ.

«Ուրախ եղէ՛ ես, ոյք ասէին ցիս ի տուն Տեառն երթիցուք մեք»։

Եւ այսպէս փոխ առ փոխ ասացեն ցվերջն ընդ Աւագ Լուսարարին զՍաղմոսն։ Յետ որոյ սարկաւագն ասացէ

«Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր». ևլն.

Հայրապետն ասացէ զաղօթս,

«Ի մէջ տաճարիս և առաջի սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ՝ երկիրպագանեմք», ևլն։

Յաւարտ արարողութեանս սկսանի երեկոյեան ժամերգութիւնն ըստ կարգին

«Խոնարհեցո՛, և Ապրեցո՛, Լոյս զուարթ և Հասեալքս»,

Եւ որ ըստ կարգին։

«Սուրբ Աստուած որ խաչեցար»,

Յատեանն ասացեն, Համբարձին

«Ուրախ լեր սուրբ եկեղեցի»։

Զկնի որոյ ասացեն

«Կեցո Տէր», և այլն։ Եւ ապա արձակի եկեղեցին։

Ապա նովին կարգաւ միաբանք տանեն զՀայրապետն լուսեալն ի վեհարան։

ԿԱՆՈՆ

Վասն կարգապահութեան հանդիսի Օծման Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց։

Յաւուր օծմանն՝ ընտրեալ ի Հայրապետութիւն՝ ի ժամ կատարման սրբոյ Պատարագի՝ յետ ասելոյ

«Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով»։

Աղօթիցն՝ անկանի ի ծունկս յԱւագ սեղանի Տաճարին, և երկոտասան եպիսկոպոսունքն զդեստաւորեալք՝ կացցեն շուրջանակի Հայրապետին ի սեղանի անդ, և սկսանի կարգ օծմանն այսպէս.

Նախ՝ երկու եպիսկոպոսունք ասասցեն տուն առ տուն զՄաղմոսն ՁԸ.

«Զողորմութիւնս քո Տէր յաւիտեան օրհնեցից»։

Մինչև ցայն տունն՝ որ ասէ

«Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից զաթոռ քո»։

Յետ սրոյ՝ ասասցէ զբարոզն

«Աղաչեսցուք զմարդասէրն Աստուած»։ և այլն։

Ապա՝ երկոտասան Եպիսկոպոսունքն միասին ասասցեն ձանիւ երիցս.

«Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ առաքելական Եկեղեցւոյ»։ և լն։

Յետ այսր աւագագոյն Արքեպիսկոպոսն զնոյնն ասասցէ թիւ

«Աստուածային և երկնային շնորհ»։

Յետ սրոյ երկոտասան Եպիսկոպոսունքն միանգամայն՝ դնելով զձեռս ի վերայ գլխոյ Հայրապետին՝ միասին և միաբերան ծանր առոգութեամբ բառ առ բառ ասասցեն.

«Մեք դնեմք զձեռս ի վերայ Սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք»։ և լն։

Ապա ընթերցցի աղօթք

«Գոհանամք զքէն Աստուած մշտնջենաւոր»։ և այլն։

Յետ այսր՝ ընթերցցի գիրքն ելից

«Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի»։

Ընթերցցի գիրքն Բ. Թագաւորութեանց

«Եւ եկին ամենայն ծերքն Իսրայէլի»։

Ընթերցցի գիրքն Եզեկիել Մարգարէի.

«Եւ եղիցի ի մտանել քահանայից»։ և լն։

Ընթերցցի գիրքն Եսայեայ Մարգարէի

«Բայց դուք քահանայք Տեառն կոչեսջիք»։

Ընթերցցի գիրքն Պետրոսի Առաքելոյն

«Ի բայ թօթափել այսուհետև»։ և լն։

Ընթերցցի Աւետարանն Մատթէոսի

«Եւ ելեալ ի կողմանս Փիլիպեայ»։ յետ որոյ ասասցէ և զ«Հաւատամք»ն, և վերաբերեսցէ զՍ. խորհուրդն։

Եւ մինչ հասանեն ցՈղջոյնն՝

Ասասցեն բարձրաձայն տուն առ տուն զբարոզն.

«Աստուածմեծ և սքանչելագործ զօրութիւն»։ և լն։

Յետ ձայնաւոր քարոզիս՝ ընթերցցի աղօթք

«Տէր Աստուած արարիչ ամենայն արարածոց». և այլն։

Յետ որոյ նոյն ինքն աւագագոյն Արքեպիսկոպոսն առեալ ի սեղանոյն զԱղաւնին միւռոնի, և եկեալ առ Հայրապետն՝ որ ի ծունկս անկեալ էջէ, հեղցէ զՄ. Միւռոնն ի վերայ դագաթան Հայրապետին՝ ասելով բարձրաձայն՝ ձայնակցութեամբ ամենեցուն զՀոգեգալստեան Շարականն։

«Առաքելոյ Աղաւնոյ» և այլն։

Եւ երկրորդ անգամ՝ հեղլով ասասցէ։

«Աննիւթական Աղաւնի», և այլն։

Եւ երրորդ անգամ՝ հեղլով ասասցէ։

«Օրհնութիւն ի բարձունս», և այլն։

Իսկ դպիրքն ի վերջ Շարականիս ասասցեն ձայնիւ՝ ծանր

«Ամէն Ալէլուեա՛, ալէլուեա՛, ալէլուեա՛»։

Եւ երկոտասան եպիսկոպոսունքն ի միասին զհեղեալ ի դագաթ Հայրապետի զՄիւռոնն՝ բոյթ մատամբ իւրեանց նկարեսցեն ի վերայ դագաթանն յիւրաքանչիւր կողմանց, և ընդ նմին ամենեքեան միաբերան ասասցեն ձայնիւ

«Օրհնեսցի՝ Օծցի՝ և Սրբեսցի դագաթ (այս անուն) Կաթուղիկոսիս այս նշանաւ սուրբ խաչիս և սուրբ Աւետարանաւս և սրբալոյս մեռոնաւս և աւուրս շնորհիւ՝ անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։»

Յետ Օծմանն ասա՝ աւագագոյն Արքեպիսկոպոսն առեալ յԱւագ Լուսարարէ զՀայրապետական սպիտակ քօղն՝ արկանէ ի վերայ գլխոյ Հայրապետին, նոյնպէս ստանալով յԱւագ լուսարարէ զՀայրապետական Կոնքեռն՝ կապէ զգօտեաւ Հայրապետին յաջոյ կողմանէ, և տայ ի ձեռն զՀայրապետական Գաւազանն։

Իսկ դպիրքն ի ժամ յիշեալ գործողութեանց՝ այն է յարկանելն զքօղն, ի կապելն զկոնքեռն, և ի տալն զգաւազանն՝ երգեսցեն զՇարականն Գ.Զ.

«Այսօր ուրախացեալ ցնծան երկնից բազմութիւնք»։ Եւ «Որք արժանաւորեցայք գալ ի փառատրութիւն», և՛ն,

Յետ այսր՝ տուն առ տուն երկու եպիսկոպոսք ասասցեն Սաղմոս ԻԲ։

«Տէր հովուեսցէ զիս». և՛ն։

«Ի վայրի դալարուոջ անդ բնակեցոյց զիս»։

Ապա ընթերցցի գիրքն Պետրոսի Առաքելոյն.

«Զերիցունս այսուհետև աղաչեմ»։

Յետ որոյ՝ ընթերցցի Աւետարանն Յովհաննու

«Եւ իբրև ճաշեցին»։ և այլն։

Եւ յաւարտիլն սարկաւագունք երգեսցեն

«զՈղջոյնն»։

Եւ եպիսկոպոսունքն համբուրելով զդագաթ Հայրապետին տան զողջոյնն ըստ կարգին։

Եւ Հայրապետն այնուհետև կատարէ զխորհուրդ սուրբ Պատարագին։ Իսկ զգեստաւորեալ եպիսկոպոսունքն կացցեն յաջմէ և յահեկէ սեղանոյն ցաւարտ Պատարագին։

Յաւարտ սրբոյ Պատարագին դպիրքն երգեսցեն զԳ.Զ. Շարականն

«Հրաշափառ Աստուած»։

Եւ թափօր կազմեալ բովանդակ ուխտին միաբանութեան զգեստաւորեալ ըստ կարգին՝ զանգահարութեամբ տանեն զՀայրապետն ի Վեհարանն՝ բուրվառաւ, խաչաւ և խաչվառաւ. և ի մտանելն Հայրապետին ի զարդարեալ վերնատունն, ի Ծաղկեալ գահլիճ Վեհարանին՝ դպիրքն երգեն զՇարականն Գ.Զ.

«Այսօր Քահանայապետ ճշմարիտ Աստուածային օրինաքն պատուեալ». և այլն։

Յետ որոյ՝ սարկաւագն քարոզէ.

«Սուրբ խաչիւս»,

Եւ Հայրապետն ասէ

«Պահպանիչ, Հայր մեր և Օրհնեալ եղերոյքն»,

Եւ նստեալ յԱթոռ հանգստանայ, ուր և ապա ամենեքեան մատչին ի համբոյր Աջոյ նորապատակ Ս. Հայրապետին. և ընկալեալ զՀայրապետական օրհնութիւնն, արձակին։

ТЕЗИСЫ ДОКЛАДОВ
ГСС. БИБЛИОТЕКА
ЗАССР-Арм ССР
им. А. МЯСНИКЯНА
Ц. ЧЕНТРОНЦЯНЦ ԱՆՎԱՆ

58382-67

ՀՀ Ազգային գրադարան
NL0158923